Պարույր Սևակ

Չեմ ուշացել

Ուշացե՞լ եմ: Թո՛ղ որ այդպես, թո՛ղ որ, անգի՛ն,
Անծանոթ եմ աղջկական քո նազանքին.
Անտեղյակ եմ, թե ինչպես ես դու ժպտացել,
Տասնվեցվդ երբ որ նոր է դեռ լրացել:
Թո՛ղ որ ես չեմ ստացողը քո առաջին
Աղջկական ո՛չ համբույրի, այլ լոկ պաչի՛.
Որ չգիտեմ, թե ինչպես ես դու կարոտել,
Երբ որ քսան-քսանհինգն ես թողել ետև:
Թո՛ղ որ, անգի՛ն, հանդիպել եմ ես քեզ այնժամ,
Երբ դու արդեն անկարող ես ապրել բաժան.
Քո անցյալից, անցած կյանքից, որ առանց ինձ
Դու ապրել ես կա՛մ այլոց հետ, կա՛մ առանձին:
Թո՛ղ որ այդպես,- ուշացել եմ թող գարունից,
Բայց ավելի քիչ չի թովում աշունը ինձ:
Ինչո՞վ է լավ արշալույսը մայրամուտից,
Աշնան հասմիկն ինչո՞վ է վատ գարնան պուտից:
Չէ՛, ավելի՛ն. երբ աշխարհում օրն է մարում,
Ծաղիկները շատ ավելի սուր են բուրում...

24.XII.1953թ.
Մոսկվա